ՍՈՆԱ ՊՈՂՊԱՏՅԱՆ

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Պրագմատիկ մտածելակերպով բնորոշվող մեր ժամանակաշրջանը տարեց տարի ավելի մեծ ուշադրություն է հատկացնում մարդկանց գեղագիտական կրթության և դաստիարակության խնդիրներին: Այդ են վկայում աշխարհի բոլոր երկրների բարձրագույն կրթության համակարգում պարտադիր կերպով ներգրավված «Մշակութաբանություն» և «Համաշխարհային մշակույթի պատմություն» դասընթացները:

Վերջին տասնամյակները շատ բան են փոխել ժողովրդական կրթության համակարգում, անուշադրության է մատնվել նաև գեղագիտական դաստիարակությունն ու կրթությունը: Բուռն ընթացող գլոբալականացման ներկայիս պրոցեսները անկառավարելի են դարձրել արևմտյան ստանդարտների ու մեր մշակույթին խորթ երևույթների մուտքը Հայաստան: Բարոյագեղագիտական ազգային և համաշխարհային բարձր չափանիշներ դեռ չձևավորած երիտասարդները, որոնց թիվը գնալով մեծանում է, անգիտակցաբար յուրացնում և ընդօրինակում են մեր մշակույթին չհամապատասխանող երևութները: Դա կարող է անդառնալի դեֆորմացիաների սկիզբ դառնալ:

Այսօր խոսքը չի գնում «երկաթյա վարագույրների» մասին. մշակույթը բազմաֆունցիոնալ և շարունակ փոփոխվող կենդանի օրգանիզմ է , նա չի կարող կանգ առնել ու կարծրանալ մեկընդմիշտ որոշված սահմաններում: Փոխշփումները հարստացնում են այն մշակույթները, որոնք հինը գիտակցաբար են փոխարինում նորով, քաղաքակրթության պտուղները զգուշորեն են հարմարեցնում սեփական մշակույթին: Պարզ է նաև, որ արհեստական արգելքներն ու կոպիտ միջամտությունները դրական արդյունքի չեն բերի: Սեփական ազգային մշակույթի կորուստի վտանգի ճանապարհին պետք է դնել երիտասարդության գեղագիտական զգացողության բարձր մակարդակը, կազմավորված ճաշակը, չափի զգացումը, որի սահմաններից դուրս կարող են սկսվել դեստրուկտիվ պրոցեսներ: Մեր խնդիրը պետք է լինի խուսափել

համահարթեցման ճանապարհ մղող այն քայքայիչ երևութներից, որոնք կործանարար կարող են լինել մեր ժողովրդի համար: Անհրաժեշտ է անել ամեն ինչ ազգային գեղագիտական դաստիարակության զարգացման ու կատարելագործման համար:

Վերջին տարիների սոցիալական, քաղաքական և տնտեսական կատակլիզմները մի շարք ծանր հարվածներ հասցրեցին մեր ազգային մշակույթին և, հետևաբար, աղավաղեցին այսօր ապրող երիտասարդ սերնդի մշակութային կողմնորոշումները: Անհետաձգելի պետք է համարել ազգային մշակույթի պաշտպանությանն ու զարգացմանն ուղղված նոր մշակութային քաղաքականության մշակման անհրաժեշտությունը: Անկասկած այդ քաղաքականության մեջ առաջնակարգ դեր պետք է հատկացվի գեղագիտական դաստիարակությանը: Այդ դերը նա կարող է կատարել, եթե լուծվեն, ըստ մեզ, երեք խնդիրներ: Առաջինը. գեղագիտական դաստիարակության բազմազան ձևերը պետք է օրգանապես միաձուլված լինեն հասարակության մեջ ընթացող խորքային պրոցեսների հետ: Այսինքն, ընդունելով տնտեսական, սոցիալական և մշակութային քաղաքականությանը վերաբերող այս կամ այն որոշում, անհրաժեշտ է կանխատեսել դրանց ազգամշակութային և բարոյագեղագիտական դաստիարակչական հետևանքները: Երկրորդը. մշակույթի և ժողովրդական կրթության ոլորտում ակնթարթային կոնյուկտուրային գործողություններից անցնել գեղագիտական դաստիարակությանը նպաստող, համակարգը վերականգնող գործողությունների: Երրորդը. մշակել ազգային մշակույթի յուրահատկությունները, ինչպես նաև համաշխարհային մշակույթի համամարդկային արժեքներն հաշվի առնող գեղագիտական դաստիարակության ազգային տեսություն:

Պատմաքաղաքական և մշակութային բուռն իրադարձություններով լի 20-րդ դարը մեծապես ընդլայնեց մեր պատկերացումները աշխարհի մասին, զգալի փոփոխություններ մտցրեց ապրելակերպի և գիտակցության մեջ: Անկասկած որոշ կորուստներ կրելով, մեր մշակույթը ներգրավվեց համաշխարհային քաղաքակրթության առաջադիմական պրոցեսների մեջ: Նոր մշակույթը՝ անցնելով խորհրդային գաղափարախոսության ֆիլտրի միջով, զգուշորեն հարմարեցվում էր ազգային մշակույթին, որն այդ գործընթացում չկորցրեց իր դեմքը, բարոյական ու գեղագիտական չափորոշիչները:

Դպրոցը իր նշանակությամբ գեղագիտական դաստիարակության գործի կազմակերպման կենտրոնն էր, ուր փորձարկվում, քննարկվում և

ներդրվում էին գեղագիտական դաստիարակության գիտական հետազոտությունների արդյունքները: Միության փլուզումից առաջ այնտեղ ակտիվորեն ներդրվում էին կերպարվեստի, երաժշտության, էսթետիկայի ու էթիկայի համամիութենական ծրագրերը. այնտեղ, ուր այդ գործը զերծ էր ձևական բնույթից, լավ արդյունքներ էին ստացվում դպրոցականների և գեղարվեստական, և գեղագիտական կրթության ու դաստիարակության գործում: Սակայն Խորհրդային Միության ամբողջ տարածքի համար նախատեսված այդ ծրագրերում, բնականաբար, բացակայում էր ազգային տարրը:

Հետազոտությունների մեծ մասում անտեսվում էր անձնավորության գեղագիտական զարգացման այնպիսի հզոր գործոնը, ինչպիսին է մշակույթի, գեղագիտական ընկալման, էթնոհոգեբանության, ժողովրդական մանկավարժության ավանդույթների ազգային յուրահատկությունը:

Մինչդեռ, ամեն մի ժողովուրդ ծագում և ձևավորվում է որոշակի կլիմա, որոշակի բնություն ունեցող տարածքում: Բնության առանձնահատկությունները մեծապես ազդում են տվյալ ժողովրդի զարգացման ուղիների վրա՝ սկսած արտադրության եղանակից մինչև ազգային բնավորությունը: Ժողովրդի «օրրանի» բնակլիմայական յուրահատկությունը ասես դրոշմվում է ազգային մշակույթի մեջ, անջնջելի հետք թողնում տվյալ էթնոսի ներկայացուցիչների աշխարհզգացողության և գեղագիտական ընկալման յուրահատկությունների վրա: Ժողովրդի մոտ առաջացող «աշխարհի պատկերը» ձևավորվում է նաև ազգային կրոնի հզոր ազդեցությամբ, որը բնորոշում է նրա բարոյական, էթիկական նորմերն ու ներազգային և միջազգային փոխհարաբերությունների ամբողջական համակարգը: Այս կամ այն կրոնի առանձնահատկությունները , դրա հետ կապված ծեսերն ու ավանդությունները մեծապես ներազդում են ազգային մշակույթի զարգացման վրա, խթանում կամ սահմանափակում են արվեստի առանձին տեսակներն ու ժանրերի զարգացումը: Ազգային կրոնով է նաև պայմանավորվում ազգի բնավորությունն ու գեղագիտական գիտակցությունը: Էթնոսի կենսունակության և զարգացման կարևորագույն հիմքն է լեզուն, որը խտացված կերպով բովանդակում է ժողովրդի ողջ պատմությունը, նրա մշակույթը, արժեքների համակարգը և պատկերացումները աշխարհի ու մարդու մասին: Ուստի ազգային լեզվի յուրացումը նույնպես մարդու գեղագիտական զարգացման անհրաժեշտ պայման է, նրա գեղագիտական գիտակցության ձևավորման կարևորագույն գործոնը: Բնական միջավայրը, կրոնը, լեզուն ու արվեստը կազմավորում են յուրահատուկ էթնիկական

հոգեբանություն, որն ուժգնորեն ազդում է էթնիկական հանրությունը կազմող յուրաքանչյուր անդամի մտածելակերպի, վարքի, վարվեցողության և կենսակերպի վրա: Ազգի էթնոհոգեբանության կարևորագույն առանձնահատկություններից է գեղագիտական ընկալման յուրահատկությունը: Գոյատևելով այլ ժողովուրդների հետ, փոխշփումների ընթացքում յուրաքանչյուր ժողովուրդ տեսնում և ընկալում է այլ ազգերի մշակույթը ելնելով սեփական գեղագիտական գիտակցությունից: Ընտրելով իր ազգային մշակույթին համապատասխանող տարրերը, ժողովուրդը ինտեգրում է դրանք սեփական մշակույթի համակարգում, դրանով հարստացնելով և զարգացնելով այն:

Ազգային մշակույթը, որի ընդերքում ծնվում և ձևավորվում է մարդը, ամբողջ կյանքի ընթացքում դառնում է նրա համար «պաշտպանիչ գոտի»: Օգտագործելով դրա իդեալները, չափորոշիչները ու արժեքների համակարգը, օգտվելով դրա բարոյագեղագիտական համակարգից, մարդը կարողանում է հաջողությամբ կողմնորոշվել շրջապատող աշխարհում, ընդունում է համեմատաբար ադեկվատ լուծումներ և պատասխանատվություն է զգում իր որոշումների և արարքների համար: Այն դեպքում, երբ ազգային մշակույթում տեղի են ունենում լուրջ դեֆորմացիաներ կամ մարդը օտարվում է դրանից, «պաշտպանիչ գոտին» քայքայվում է և նա վերածվում է ,,միջանկյալ անձնավորության,,՝ մարգինալի: Վերջինս կորցնում է բարոյագեղագիտական կոորդինատները, չստանալով փոխարենը այլ լիարժեք համակարգ: Այդ դեստրուկտիվ և հասարակության համար շատ վտանգավոր պրոցեսները կարող են տեղի ունենալ զանգվածային միգրացիաների և դեպորտացիաների կամ տվյալ ազգային մշակույթին անհարիր, խորթ նորամուծությունների չափազանց ինտենսիվ և խտացված հոսքերի ընթացքում: Այդ դեպքերում մարդը կորցնում է իր կապը հարազատ էթնոսի հետ, կապվածությունը հայրենի հողին, նրա մշակույթին և պատմությանը: Մեր երկրում այդ պրոցեսն արդեն տարիների պատմություն ունի և մեծապես պայմանավորված է բնակչության զգալի մասի տեղափոխությամբ, հասարակության շատ շերտերի կյանքի որակի կտրուկ նվազեցմամբ և վերջին տասնամյակում բարոյագեղագիտական դաստիարակության նկատմամբ ակնհայտ անտարբերությամբ:

Անձնավորության մարգինալացումը ինքնին իրապես ողբերգական վերափոխում է նշանակում մարդու կյանքում, սակայն ավելի վտանգավոր է դառնում, երբ այն ընթանում է արագ և աննպաստ պայմաններում, հասարակության բարոյական, քաղաքական և մշակույթային սուր ճգնաժամի իրավի-

ճակում: Այդ դեպքում մշակութային թաղանթը շատ արագ է վայր ընկնում և նրա տեղն են զբաղեցնում բնազդները: Մարդինալի գիտակցությունը դառնում է պարզունակ և ավելի հեշտությամբ է ենթարկվում ներշնչմանն ու մանիպուլյացիաների: Առավել հաճույքով և դյուրությամբ է ընկալվում այն, ինչը այլևս չի զսպվում տվյալ մշակույթին բնորոշ բարոյագեղագիտական նորմերով: Նմանատիպ այլակերպումներից խուսափելու համար է պետք գիտակցել մարդու և ազգային մշակույթի անխզելի կապի գոյության անհրաժեշտությունը և ի դեմս այն հասարակական ու մշակութային փոփոխությունների, որոնց ականատեսն ենք մենք, ստեղծել գեղագիտական դաստիարակության ազգային համակարգ: Այս խնդրի լուծմանն է պետք ծառայեցնել ազգային էթնոմանկավարժության փորձն ու ավանդույթները: Պատմական փորձը համոզում է, որ մեր ժողովուրդը բազմադարյա պատմության ընթացքում ոչ միայն ստեղծել է իր բարձր ու հարուստ մշակույթը, այլև, ելնելով ազգամշակութային ու մանկավարժական առանձնահատկություններից, կատարելագործել է գեղագիտական դաստիարակության ձևերն ու եղանակները: Յուրօրինակ գեղարվեստագեղագիտական փորձը դարերի ընթացքում խտացվել է օրորոցային երգերի, ավանդապատումների, առօրյա և տոնական երաժշտության, կրոնական ծեսերի, ժողովրդական խաղերի, հարսանիքների, երգերի, հեքիաթների, հանելուկների, առակների ինքնատիպության մեջ: Ամեն ինչ այս կամ այն կերպ հարմարեցվել է գեղագիտադաստիարակչական նպատակներին: Գեղեցիկի զգացումը արտացոլվել է ոչ միայն բանահյուսության մեջ, այլև մեր գորգերում, ժանյակներում, բնակարանների հարդարանքում, ամանեղենում: Գեղագիտական դաստիարակության մեջ մեծ դեր են խաղացել ազգային համաժողովրդական տոնակատարությունները: Բոլոր այս ձևերը ծնվել և դարերի ընթացքում իրականացվել են որոշակի ազգամշակութային պայմաններում , այնուհետև ամբողջացել ու դարձել են մեր ազգի ինքնագիտակցության կերպը, դարձել ազգային գեղագիտադաստիարակչական համակարգի օրգանական մասը: Այս հսկայական ժառանգությունը չպետք է կորչի, չպետք է վերածվի սոսկ մշակութաբանական հետաքրքրություն առաջացնող նյութի,այն պետք է գտնի կիրառության արժանի ձևը:

Խնդրի լուծման առաջավոր ճակատ պետք է համարել դպրոցը՝ իսկապես ազգային դպրոցը: Դպրոցն ազգային մենք չենք կարող անվանել միայն այն բանի համար, որ ուսուցման լեզուն հայերենն է: Ազգային դպրոցը երեխաներին շրջապատող յուրահատուկ մթնոլորտն է, որը յուրօրինակություն

է հաղորդում ուսումնական առարկաներին, ձևավորում է ազգային բնավորությունից և մտածելակերպից բխող բարոյագեղագիտական արժեքների համակարգը: Առանց այդ աշխատանքի չափազանց բարդ կլինի դիմակայել մարդկանց «պաշտպանիչ գոտու» քայքայմանն ու բնակչության զգալի մասի կատաստրոֆիկ մարգինալացմանը:

Գեղագիտական կրթությունն ու դաստիարակությունը դպրոցում, պետք է իրականացնեն արվեստի առարկաները, սակայն գեղագիտական դաստիարակության համակարգի մեջ կարելի է ներառնել նաև այլ առարկաներ, օրինակ՝ «Երկրագիտություն» կամ «Հայրենագիտություն» առարկան, որի ուսումնասիրությունը փոքր հասակից դպրոցականների առջև կբացի հայրենի բնության գեղեցկությունն ու անկրկնելիությունը, այն սիրելու ու պահպանելու ցանկությունը, հայրենիքի անջնջելի կերպարը կդրոշմի նրանց հոգիներում: Անհրաժեշտ է հիշել նաև, որ ազգի ձևավորման երկար ճանապարհին, մարդն իր գեղագիտական հաճույքի ու զգացմունքների արտահայտման կայուն ու անվերջանալի պահանջը բավարարել է կրոնական ծեսերի,սովորույթների, կրոնական արվեստի միջոցով: Անցյալ տարիների կրոնի դեմ պայքարի տխրահռչակ փորձը համոզել է, որ հնարավոր չէ անտեսել ազգի հոգևոր մշակույթի հսկայական, հիմնարար, անհատի բարոյագեղագիտական ավանդական դաստիարակության այդ կարևոր շերտը առանց վնաս հասցնելու մարդու հոգեկան առողջությանը: Հետևաբար, գեղագիտական դաստիարակության ազգային համակարգում իր արժանի տեղը պետք է զբաղեցնեն մեր կրոնի պատմությունը, մեր եկեղեցու բարոյական սկզբունքները, եկեղեցական ճարտարապետությունը, միջնադարյան ձեռագրերի նկարազարդումները, խաչքարերը և, առհասարակ, մեր նախաքրիստոնեական և քրիստոնեական արվեստը:

Ազգային գեղագիտական դաստիարակության արդյունավետությունը մեծապես կախված է մայրենի լեզվի տիրապետումից: Գաղտնիք չէ, որ միջնակարգն ավարտած, այսօր բարձրագույն դպրոցում սովորող մեր երիտասարդների մեծամասնությունը խոսում է չկազմակերպված, պարզունակ ու աղքատիկ լեզվով, որն ընդունակ չէ հաղորդել նրանց մտքերն ու հույզերը, ինչը, չարտահայտված լինելով այլևս չի զարգանում: Մայրենին աղավաղվում է տարբեր ռադիոկայաններից, հեռուստաեթերից հնչող խոսքում: Կենցաղային բարբառը, անճաշակ արտահայտությունները,տափակ հումորը և, վերջապես, գռեհիկությունը առանձապես ծաղկում են լեզվի և արտահայտության գեղագիտական կողմը անտեսելու, գրական ու փողոցային լեզուների խառնուրդի

հետևանքով: Անտարակույս, արժե դպրոցականների ուսումնական առարկաների ցանկ մտցնել ճարտասանության մի դասընթաց. մեր երեխաները պետք է հնարավորություն ստանան զգալու հայոց լեզվի գեղեցկությունը, որին կհետևի հոգատար վերաբերմունքը մայրենիին: Նույն այդ խնդրին կարող է ծառայել գեղագիտական դաստիարակության անփոխարինելի միջոցը՝ հայ գրականությունը: Դաստիարակչական նպատակներով անշուշտ կարելի է օգտագործել արևելյան մշակույթներում լայնորեն կիրառվող, դարերի փորձությունն անցած աֆորիզմներն ու ասացվածաբանությունը: Աֆորիզմներում է խտացվել մարդկության բարոյագեղագիտական արժեքների զգալի մի շերտ, իսկ ազգային բանահյուսությունը անգնահատելի շտեմարան է, որտեղ վառ կերպարայնությամբ են արտացոլված գեղեցիկի ու տգեղի, իմաստության ու հիմարության, առաքինության ու ստորության , բարու ու չարի համամարդկային և ազգային բնորոշումները: Այլաբանությունների մատչելի եղանակով դրանք ներշնչում են այն բարձր իդեալները, որոնց պետք է շարունակ ձգտի արատներից խուսափել ցանկացող մարդը:

Արվեստն ակտիվորեն է ներազդում մարդու վրա, հարստացնում նրա հոգևոր աշխարհը, այս կամ այն վերափոխումն է կատարում անձի կողմնորոշումների մեջ: Ինչի մասին էլ խոսի արվեստագետը, նրա ուշադրության կենտրոնում միշտ մարդն է իր յուրահատուկ վերաբերմունքով դեպի աշխարհը: Արվեստի ունկնդիրը, դիտողը, ընթերցողը զգում է իրեն իրադարձությունների կենտրոնում, վերապրում է իրադարձությունը, իրավիճակը, խորհում դրա մասին: Արվեստի այդ բացառիկ հատկությունը նկատել է դեռևս Արիստոտելը և անվանել է այն կատարսիս՝ մարդու հոգին մաքրազարդող, վեհացնող, կատարյալ դարձնող ուժ:

Գեղագիտական կրթությունն ու դաստիարակությունը, ինչպես հայտնի է, երկարատև պրոցես է, այն սկսվում է ընտանիքում, շարունակվում դպրոցում, այնուհետև ամբողջ կյանքում: Այդ շրջայի ամենաարդյունավետ և կառավարելի շրջանը դպրոցական տարիներն են, քանզի դպրոցի միջով է անցնում յուրաքանչյուր քաղաքացի և հասարակությունը կարող է ազդել նրա ձևավորման վրա առողջ հասարակություն ստեղծելու նպատակով: Ունենալով գեղագիտական դաստիարակության ազգային ծրագիր մենք կարող ենք հասնել նրան, որ մեր փոքրաքանակ ժողովուրդը, բաց լինելով համաշխարհային մշակույթի համար, չկորցնի իր «աշխարհզգացողության կերպը» ազգային ոգեղենությունը՝ ազգապահպանության կարևոր պայմանը: